««Կուսակցությունների մասին» օրենքի բարեփոխում՝ գենդերային ուղղորդմամբ» թեմայով

Ազգային ժողով- ՔՀԿ համագործակցության հարթակի հերթական հանդիպման

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Ս.թ. սեպտեմբերի 30-ին Երևանում կայացավ ԱԺ-ՔՀԿ համագործակցության բաց հարթակի (այսուհետ՝ «Հարթակ») հերթական հանդիպումը, որտեղ ներկայացվեցին «Կուսակցությունների մասին» օրենքի բարեփոխմանն ուղղված առաջարկներ, որոնք կապահովեն կուսակցություններում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը:

Նախաձեռնությունն իրականացվում էր «Կանայք քաղաքականության մեջ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և ՕքսԵՋԵն հիմնադրամի հետ համագործակցությամբ, Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» աջակցությամբ:

Հանդիպմանը մասնակից էին դարձել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ոլորտի փորձագետներ, պետական, միջազգային կառույցների գործընկերներ, ինչպես նաև Ազգային ժողովի նախագահի տեղակալ Լենա Նազարյանը, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Քրիստինե Գրիգորյանը, Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի ղեկավար, ԱԺ պատգամավոր Համազասպ Դանիելյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Մարիա Կարապետյանը, Սոնա ազարյանը, Թագուհի Ղազարյանը, Հերիքնազ Տիգրանյանը:

Լենա Նազարյանը ներկայացրեց հիմնական առաջնահերթությունները, իսկ Համազասպ Դանիելյանը ԱԺ-ում ստեղծված աշխատանքային խմբի առաջաներթությունները, որի մասն են կազմում նաև հանդիպման մասնակից որոշ ՀԿ-ներ: Խոսնակները տեղեկացրեցին նաև ակնկալվող փոփոխությունների ժամակացույցի մասին՝ կուսակցությունների մասին օրենքի և

հարակից փոփոխությունների փաթեթը՝ մինչև տարեվերջ, իսկ ողջ գործընթացը ընդհանուր ամռամբ կտևի շուրջ 1-1.5 տարի։ Համազասպ Դանիելյանը կարևորեց թե՛ նախաձեռնությունը և թե՛ կանանց մասնակցությունը կուսակցություններում խրախոսող կարգավարումների ավելացման անհրաժեշտությունը՝ կոչ անելով հաջորդ հանդիպման ժամանակ նաև ներկայացնել որոշ կոնկրետ լուծումներ՝ հիմնված ուսումնասիրությունների, միջազգային լավագույն փորձի և ժողովրդավարության հիմնարար սկզբունքների և արժեքների վրա։

Հիմնական առաջարկներ, որոնք արվեցին ՕքսԵՋԵն հիմնադրամի, ՊրոՄեդիա-Գենդեր ՀԿ-ի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և ՄԱԶԾ-ի կողմից

- Ներառել օրենքում կուսակցությունների հիմնադիր փաստաթղթերում և ներքին կանոնակարգերում գենդերային զգայուն սկզբունքների ներառման պահանջը՝ դիտարկելով այն որպես ներկուսակցական ժողովրդավարության կայացման պարտադիր նախապայման։
- Ներառել օրենքում կուսակցությունների ղեկավար մարմինների կազմում կանանց ներկայացվածության ապահովման մասին պահանջը՝ ոչ պակաս, քան տվյալ կուսակցությունում կանանց ու տղամարդկանց համամասնությունը։
- Ներառել գենդերային քվոտայի պահանջը «Կուսակցությունների մասին» օրենքում, որպես ժամանակավոր, աջակցող միջոց այն կուսակցությունների համար, որոնք ցանկանում են ներկայացված լինել Ազգային ժողովում։
- Նախատեսել օրենքում խրախուսման մեխանիզմներ, այդ թվում լրացուցիչ պետական սուբսիդիաների կամ այլ արտոնությունների տեսքով, այն կուսակցությունների համար, որոնք հատուկ քաղաքականություն են իրականացնում կանանց մասնակցությունն ընդլայնելու և նրանց առաջխաղացումն ապահովելու ուղղությամբ։
- Ազգային ժողովի և համամասնական ընտրակարգով ՏԻՄ ընտրությունների արդյունքներով քաղաքական կուսակցություններին տրվող պետական ֆինանսավորման չափորոշիչների թվում դիտարկել նաև կանանց ներկայացվածության մակարդակը՝ լրացուցիչ ֆինանսավորում նախատեսելով այն կուսակցությունների համար, որոնք իրենց ընտրական ցուցակներում և դե-ֆակտո ընտրված մարմնում ապահովել են կանանց 40-50% ներկայացվածություն։
- Պետական ֆինանսավորում ստանալիս՝ կուսակցությունը ստանա լրացուցիչ ֆինանսավորում այն տոկոսի չափով, որով կանանց համամասնությունն իրենց մոտ գերազանցում է ընտրական օրենսգրքով սահմանված քվոտան։ Ընդ որում, այս դրույթը գործի և՛ ԱԺ, և՛ ՏԻՄ մակարդակներում։
- Կիրառել պատժամիջոցների մեխանիզմներ այն կուսակցությունների համար, որոնք քայլեր չեն իրականացնում կանանց մասնակցությունն ընդլայնելու և նրանց առաջխաղացումն ապահովելու ուղղությամբ։
- Կուսակցությունն ունենա ներառականության և ներկայացուցչականության ապահովման քաղաքականություն՝ որպես պարտադիր փաստաթուղթ։

Այլ առաջարկներ

- Քվոտաների կիրառման անհրաժեշտություն նաև ՏԻՄ մարմինների համար, հատկապես հաշվի առնելով համայնքների խոշորացման հետևանքով կանանց ներկայացվածության նվազման դինամիկան։

Որոշումներ, հետագա քայլեր

- Կուսակցությունների մասին օրենքի և հարակից փոփոխությունների փաթեթը ներկայացնել ԱԺ մինչև տարեվերջ, իսկ ողջ գործընթացը ընդհանուր ամռամբ կտևի շուրջ 1-1.5 տարի:
- «Կուսակցությունների մասին» օրենքի շուրջ լրացուցիչ հնարավորություն ստեղծելու նպատակով, Ընտրական բարեփոխումների աշխատանքային խմբի հետ համատեղ, հոկտեմբերի 11-ին կկազմակերպվի ընդլայնված հանդիպում՝ ներգրավելով նաև արտախորհրդարանական ուժերի, որոնք նույնպես կներկայացնեն իրենց առաջարկները բարեփոխումների վերաբերյալ:
- Առաջիկա հանդիպմանը կներկայացվեն նաև «Կուսակցությունների մասին» օրենքի գենդերային ուղղորդման հետ կապված միջազգային փորձի օրինակներ:

Հանդիպմանը արված առաջարկների մանրամասներին կարող եք ծանոթանալ ստորև.

Առաջարկներ.doc

Հարթակի հաջորդ հանդիպումը կկայանա հոկտեմբեր ամսին: Օրվա և ժամի հետ կապված՝ լրացուցիչ նամակ կշրջանառվի: Բացի առանձին թեմայի քննարկումը, անդրադարձ կկատարվի նաև նախորդ քննարկումների առաջարկներին, որոնք վերաբերում էին «Կուսակցությունների մասին» օրենքին, կանանց վերարտադրողական առողջության և ընտանեկան բռնության հաղթահարման հիմնահարցերին: